Բայց դու, ով սիրելի սրբոց և ցանկալի հրեշտակաց և մարդկան, որ դասաւորեցար և հանգեար յիններակ դասս հրեղինաց և լուսեղինաց և ի զունդս մարգարէից և ի պարս առաքելոցն և յերամս վարդապետացն և ի ջոկս հայրապետացն
5 և ի գումարս ճգնաւորացն և ի կաճառս աստեղափայլ մարտիրոսացն և առեր զինն երանութիւնն յամէնաւրհնեալ բերանոյն Քրիստոսի, լեր մեզ միջնորդ հաշտութեան աւգնականութեամբ ամենայն սրբոց, զի փրկեսցէ զմեզ յանաւրինաց և ի մեղաց և ի դիւաց և ազատեսցէ զմեզ ի դժոխոց բարե-
10 խաւսութեամբ ամենայն սրբոց. ամէն։

Բ.

№ 851—921

367բ Փառք ամենասքրբոյ երրդեանն և միածութեանն հաւր անծնի և անսկզբնականի։ Եւ ի փառս ծնիցելոյն ի նմանէ անեզապէս որդոյն միածնի, եւ ի գովեստ բղխեցելոյ ելողի և արտաքս առաքելոյն ի հօրէ անճառաբար հոգոյն ճշմարտի յաւ"տնս ամէն։

Արդ գրեցաւ ածային այս մատեան ի յաւարտումն կտրիմն ութն և տասներրեակ յոբելինին եւ յաւելեալ ութերրդ ամ ի յաբեթական տումարի, որ է ՊԾԸ։ Եւ արդ՝ փոքր մի համա-
20 ռաւտեցիլ զսկիզբն գրոցս, թէ ուր գրեցաւ և զիարդ։ Վասն զի գնացաք մեք ի ծառայութիւն և յաշակերտութիւն մեծ և յաղթող և քաջ ախոռանին (sic) հաւատոյ սքրբոյն Գրիգորի անձինք ԺԲ և ոչ հանդիպեցաւ մեզ ըստ կամաց մեր, վասն ոչ դիպելոյ ժամանակին, և ոմանք ի մեծագոյն եղբարց իմոց անդ
25 ստացան զսքրգիրս զայսի։ Եւ արդ անս եղև սկիզբն գրոցս և գրեցաւ Գ հատորն ի վանք Ստաթէի։ Եւ անտի քաքայեալ (sic) ցրուեցաք եւ եկեալ յերկիրս Քաջբերունոյ, որ կոչի Արճէշ,

---

† Հարցմունք Տաթեւացւոյ

2) Բե. ի յիններակ

3) Ա. հրեշտակաց փ. հրեղինաց եւ լուսեղինաց Բե. ի զունդ ԲԳե. մարգարէիցն

4) Դ. առաքելոց ԱԲ. երամս ԴԵ. վարդապետաց Դ. հայրապետաց.

5) Դ. ճգնաւորաց ԲԴ. մարտիրոսաց

6) ԱԲ. օրինեալ փ. յամէնօրինեալ

7) Բ. հաշտութեամբ

8) Ա. յամենայն

9) Ա. չ. եւ ազատ.. Ե. եւ ազատէ